





ճանաչանէ թէ յունիս 15ին օրը նորայնոյ Հայոց առաջնորդարանին մէջ կուտանք մը տրուեալ է Հայաստանի քառասուն զօրաց ընդհանուր հրամանատար Լազարէֆի զօրնպետին Գլխաւոր հայ ընտանիքներէ երիտասարդք սեղանին սպասուորութիւն ըրեր են իրենց խնդրանքը Ժողովրդեան մեծ բազմութիւն առաջնորդարանին շուրջը խանկալ եւ առաջադիմ հորդանքութիւն օգր կը թնդայնէին:

Հազարէֆ զօրնպետն յունիս 18ին հարս պիտի երթար:

Կարնոյ զինուորական հրամանատար Խմբագիր զօրնպետը Կարսի հրամանատար անուանելով, անոր տեղ թողուի զիջին հրամանատար Գաղղէի գնդապետը գրուեալ է ի կարին:

Վանէն, Բաղէն, Արսիկիւրէն, Զմիկաճագէն նամակներ եկած են մեզ, որք բարբարոս ֆրդաց նորայնոր շարագործութիւնները ծանուցանելով՝ օգնութիւն և պաշտպանութիւն կը հայցին: Վանէն գրուածը կը ծանուցանէ նաեւ թէ բազմութիւն քաղաքացի և զիջացի Հայ Ժողովուրդք խոսքի խումբ Ռոսիոյ հոգը կը գաղթեն:

Այս նամակներն հրատարակել հարկ չգտանցինք, աներկմիտ ըլլալով այս անգամ թէ այդ հարստահարութեանց և սփռագործութեանց վերջ տրուելու ժամանակն եկած է, և թէ վերջապէս կայսերական կառավարութիւնն հարկադրեալ է անյայտ լարեկարգութիւններ ու բարենորոգումներ ընել այդ գրգռող գաւառացի մէջ՝ աշխարհութեամբ Անգղիոյ և հակառակութեամբ Եւրոպիոյ, ինչպէս որ կը տրամադրեն վերջին գաղափարութիւնք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐ

Մենք ազգը այսպէս բնաւ չենք տեսներ, ո՛վ և ինչ որ լինի օր մեծ և փոքր, հարուստ և աղքատ, եկեղեցական և աշխարհական, ծեր և տղայ, այր և կին, տէր և ծառայ, գիտուն և անգիտ, բնիկ և արտագիտ, բաւական է թէ Հայ է, հարցմունք մը միայն ունի, հարցմունք՝ անտէր, դառն և անթափանց:

— Ինչ լաւ Պէրլինէն:

Նայնպէս և նայն ձեռով է պատարխանը:

— Ուրիշ, գէշ:

Այս համառօտ հարց պատասխանէն վերջը կ'սկսի խոսակցութիւն մը, որ ամեն ոք ըստ իւր հնչեղանքութեան կը քննէ քրեական անցեալը և վաղուան ապագան:

Հոս երիտասարդք, որ լինէր յաւսով, և որուն գլխուն մէջ գեռ երէկ և յետագայ երջանիկ և զբաւարթ ազգային մը երազները կը շրջին, կը տեսնեն ի կիրքով և զայրութեամբ կը մենչէ:

Հոն ծերը սրտով ու մաքով, որուն սառ գլխուն մէջ յոյս երբէք չի թափանցեր և ամեն ապագայի շարագուշակ մարդարէ մը եղած է, իր իմաստութիւնն ու նախատեսութիւնը կ'ամաց և ջանքով ձայնով առաջ կը քշէ:

Առաջինին յաւաստութիւնը կիմանանք, երիտասարդութիւնը շատ կոգեորի, շատ կը լքանի, սպասենք որ քննենք:

Բայց այդ ծերուն' որ ոչ անցեալը կը յիշէ և ոչ ներկայն կը ճանչէ, և իրեն կեանքն կը չափէ ազգին կեանքը, և որ աչքը գոց գերեզման կիլնէ և իրեն հետ կարծէ թէ ազգը կը գաղափարի, ամեն ոք իրաւունք ունի հեջ ըսելու:

Վանն զի սխալմունքը շատերը պարտք

է ամեն անոնց՝ որ վիճակը յստակ և սրտը կը տեսնեն:

Իսկ անոնց՝ որ չարակամութիւն կը խառնեն խօսքի և դրութեանց մէջ, իրենց անձնասիրութեան հարուած մը երև տկայելով գործին սկիզբէն, և գործին սեյտոյ ներք իրենց իմաստութեան յաղթանակ կը կարծեն, այնպիսիներուն ցաւ ի սիրտ կըրենք: «Մոռնա՛նք մեր անձը, մեր կիրքերը, և ազգը տեսնենք թշուառ և ինկած»: Գեռի՛ չարակամութիւն և ճղճիմ բամբասանք:

Վանն զի չարակամ և ճղճիմ բամբաղ կը ըլլանք երբ կըրենք:

«Առջի օրէն սխալմունքը հոն էր որ չի շարժեցանք: Թէ որ մենք ալ դատարէինք, թէ որ մենք ալ տեղ տեղ կըրակը բռնկցնէինք, գառնուցեալ սրտերը տառելութեամբ լրցնէինք, որ տկարկութեան մը միայն կը նայէին, և փոխանակ ամենակարող Ժողովին խնդուկու չափաւոր առաջարկութիւններ ընելու՝ բարձրէն թըռնէինք: Մեծամեծ խնդիրներ ընէինք, տկարկութիւն, ինքնօրինութիւն խնդրէինք, և անէ մեր չնչին փափաքներուն կը հասնէինք: Եւ տար փոխարէն ինչ ըրին մեր իմաստուններն և մանաւանդ մեր իմաստուն Պատրիարքը: Նախ ամեն տեղ յաղեալ սրտերն հանգարտեցուց, երիտասարդութեան կորովը ջրառեց, ամեն տեղ եկեղեցականաց խառն պատուէր զըրկեց համբերութիւն, հաւատարմութիւն և փոստհոլութիւն քարոզել, համբերութիւն նախատեսաց, զըրկեց, յաղեալութեանց, սպանութեանց և ամենայն չարեաց որ տեղացիներ էին և կը տեղան ֆրդաց, Զէրքէզաց, Պաշը պօզուքաց և մինչև դատաւորաց և կուսակալաց անըզգամութեանն ու կրօնամարտութեանն: Հաւատարմութիւն տա թաղաւորն, որուն արդարութիւնն և սըրտին աղնուութիւնն անխաբ երաշխաւոր էին ազգայ բարեկարգութեանց և բարօրութեանց: Վստահութիւն եւ քաղաքական իմաստութեան և մարդասիրութեան վրայ, որ վերգովմանց վախճանին՝ արեւելեան մեծ խնդրայն անշահաւէր և վերջնական կարգաւորութիւն մը պիտի տար: Եւ այս ան վայրկեաններ, երբ քաջագոր բանակներ յանուն քրիստոնեայ ազատութեան կը դիմէին անտանի ի և դարաւոր գերութեան վերջ տարու համար: Եւրոպական մարդասիրութիւնը շատ տեսաւ մեր թշուառ հայրենեաց անունը, որ գաղափարութեան մը մէջ երկու ինքնակալաց ըստորագրութիւնը կը կրէր, և ջնջեց: Ահա Հայ ազգին քաղաքը և վստահութեան կըրակները քարոզներէն Հազար անգամ ընտրելի էր որ քիչ մը նախատեսութեամբ ճանչնալով մարդկային սրտերու անտրդ շահասիրութիւնը, ճիշահանէինք ամեն ինչ, մեր ձայնը չի բեցնէինք: Եւրոպիոյ, ոչ Անգլիոյ Բիշնէնք մէջ, ոչ Պէրլինի մտադրիկ թափառականութեանց մէջ չի ծանօթացնէինք մեր ազգը, մեր վիճակը, մեր վերքերը, չի ժողովուր համար հին և դարաւոր նախատեսաց վրայ նոր նախատեսք կատակեանց:

Ասանք են ահա համառօտիւ այն խօսքերն՝ որ անհամբեր բերաններ կը բռնանան Ռուսի համարձակութիւն կառուելը մենք, ոչ ոչ առաջնորդ, ոչ խորհրդակցան, այլ մենակեաց և հեռուանց հանգիստեան, զրուցել թէ նոքա որ ազգին ուղղութեան սըրբազան պարտաւորութիւնն ունենին, համբերութիւն, հաւատարմութիւն և փոստհոլութիւն քարոզեցին, շատ լաւ ըրին, շատ իմաստութեամբ չարժեքեցան:

Մենք ուշի ուշով կարդացինք Մարտի 24-է թուոյն Հայաստանի վերնագրով յղուածը, ուր պարզ, համառօտ և ճիշդ սկիզբէն մինչև այս վայրկեանս վիճակը կը բացատրուի: Եւ որ գիտագութեան արժանի է, նոյն ինքն Ռուսիեան կառավարութիւնը Հայոց պահանջմանց հակառակ չէ, և ինք հաշտ աչք տեսնէր է նոքա չափաւոր և իմաստուն պահանջմանք, որ ոչ միայն ահաւորութեան քննադատ չէր կըրնար լինիլ, այլ թերեւ առաջին օգտակարն էր լաւ խորհրդածութեան առեւելք, և թերեւս մի միայն շահաւորն էր թէ՛ տիրող թուրքին և թէ՛ հրապարակ Հայուն:

Այս, համարձակ զրուցենք և կրկենք Բիշնէն:

Ո՛ր և ինչ տէրութեան համար առաջին օգտակար կարծում սկզբունք մը կայ: զանազան ցեղերն ի մի խառնել, ձուլել, և ազգ մը միայն կազմել միակտուր կրօնիւ լեզուաւ և սովորով մեզմա՛ր: զօրութիւն մ'է աս տէրութեան մը համար՝ երբ կարելի է, և երբ դարեւր անզգայի կըրպով կըցեր են զայն կատարել առանց բռնութեան: Եւ ասոր կատարման համար երկու կողմանէ յաւելոյն և անզգայի թոյլտուութիւնը եղած են, և այնմ վրայ այսօրուան Գաղղիական և Խաղաղական ազգութիւնքն են, ուր Թրանք և Գաղղիացի, Լատինացի և Խաղաղացի, եկ և բնիկ ձուլուեալ և ազգ մը միայն կերտան:

Բայց երբ ժամանակը ձուլմունքը չէ կըցեր կազմել, փնտրելու է այն բանը և այն բանն որ ասմունքը ունի, և զոր Լատինը Ժիւլիան-Բոգլիան կանուանէ, որ ճիշդ կամ քիչ քիչ մը կը թարգմանենք, և որ երբ առաջինն անկարելի է, երկրորդը շատ կարելի է, երբ երկու կողմին օգտին համար մի միայն ճանապարհ կը մնայ զօրութեան և տեւականութեան:

Կատարեալ ինքնօրինութեան անկի Հայուն պէտք կար ազգային և լաւ մատակարարութեան, ոչ միայն Հայաստանը ծաղկեցնելու համար, այլ մի և նոյն ժամանակ համընթացութիւն մը ստեղծելու համար շրջակայ ասիական գաւառաց, ուր թիւրք ցեղըն իւր մեծամասնութիւնը կը կազմէ: Այս օգտակար առաջարկութիւնն էր որ մերժեց գեղարտնամոզով, Հայոց Խիշիքն ի յարգանքէն համար: Բայց այն օրը որ մէկ կընէ թէ «Հայոց խնդիր պէտք չէ յարստանել, կըրեգունի ուրեմն թէ խնդիր մը կար, լաւ կը լինէր թէ խնդիր մը լաւ կ'ապուէր քան թէ քննանար:

Բայց ինչ կար յաւաստութեան Հայուն համար: Միթէ Լէնկիթիւնը դժուար է հասեր:

Կարելի է Հայ ազգը գեռ գրգռողութիւններ ունենայ: Կարելի է գեռ համբերութեան օրերու պէտք ունենայ, բայց ոչ երբէք այն գրգռողութիւնը վայրկեանները պիտի գառնան, որ օր աւուր անհետ լըլլան աշխարհքի վրայէն: Ինչ որ քաջութիւնը չի կըրնար ընել, համբերութիւնն ու յարստութիւնը կըրնան ընել: Ասիկց քսան և հինգ տարի առաջ ազգ մը կար, որուն երեք տուներն մէկը միայն միտ տապար մը ունէր, այդօր այն Մաճուա ազգը զէնք ալ ունի, ազգային ժողով ալ ունի, մասնաւոր կառավարութիւն ալ ունի, և իւր կայսեր առաջին խորհրդակալը այն մարդ ինքնէն մին է՝ որ երբեմն նոյն կայսեր հրամանաւ մահուան վճիռն էր ստացել: Եւ ոչ թէ զինուց քաջութիւնը կամ ապստամբ քաղաք շարժմանքն ազատութիւն և

կեանք բերին իրեն, այլ համբերութիւնն և ժամանակի պարագայներ: Մենք չենք կարծել թէ այն մեր խնդ ազգը՝ որ Սասանեանց և Արաբաց փոթորիկներուն տակալ կըցեր է, որ ճինկիկի և Լէնկիթիւնի թաթարաց ձեռքէն թէպէտ ճղակտոր՝ բայց երբ է, Ռուսացուց և Պարսից ահագին բախմանց և խիստ մատակարարութեանց մէջ գեռ մնացեր է, Անգլիոյ հովանաւորութեամբ կարենայ չքանալ: Վանն զի Պոլիէնէրու և անոր նմաններու քով՝ կան Շաֆթէզըլիի պէս անձինք, որոնց մարդասէր առաքելութիւնն ու ազնուասիրութիւնն ամեն առավելութեան աստիճան կըրնան կրկենք և աղնուապետութիւնը սիրելի նախ այնպիսեաց, որոց սկզբունքները հին աշխարհի հետ զիւրենք թշնամի է ըրեր: Մենք աւելի կուզենք հաւատարմութեան տէրութիւնն և նորա խորհրդակալն Անգլիական հովանաւորութիւնը այնպիսի դիրք մը ստեղծէ, որ գեղարտնամոզովն չի լսածը և չկատարածը և Հայոց վախաբը ինք կատարէ տեւելով, վանն զի անոր մէջ կայ վերականգնութեան յոյս մը նաեւ բուն տիրող պետութեան համար:

Բայց գիտնալով թէ գիտնազիտութիւնը կամ աշխարհագրութիւնըն որ հաղիւ երբէք սիրտ ունի, և երբեմն նաեւ ուշմութեան դէմ կը մեղանչէ, գրականագէտ մեր Հայաստանեայց վիճակը գառնացնէ, այն տեսն ինչ պէտք է ընենք:

Ան տեսն մեր թեթեամբութեան սխալ կարծիքները կուզենք, մեր արեւմտեքէն առած շատ անգամաւոր և կեղակարծ գաղափարները կը սըրբագրենք, կը քննենք և վերահասու կը լինինք թէ մեծապօր ինքնակալութիւն մը կայ, ուր մեր միլիոնի մօտ եղբայրները կ'այրին խաղաղ և հանգիստ, կը պաշտեն իրենց կրօնըն անվրդով, տէր են իրենց ըստացումաց և կենաց և պատուոյն, ուր ֆիւրքն և իր նմանիք չունին իրաւունք հազկահարութեան և անպատժութեան, ուր գոգոհ Բալոնիացոյն քով կան Զինլանաացոց պէս ժողովուրդներ, որ դո՛ւն իրենց վիճակէն շատ աւելի քան զիստեացին:

Սպասենք, յոսանք, բայց սուսինք: Վանն զի հիմա՛ր ուսմունքը միայն կուտայ մեզ կարողութիւն ու ինչ պարագայի մէջ ուղիղ գաւառեւ և մեզ օգտակարը գործիւ:

ԾԵՐԵՆՑ

Ի Լ Ա Ն

Պուլտուր վէ իսթարթա եարմ եաղըր սախթիանը, ատէտ 3000, պէհէր ատէտի 48 զըշ:

Պուլտուր վէ իսթարթա պիւթիւն եաղըր սախթիանը, ատէտ 8000, պէհէր ատէտի 38 զըշ:

Նիզամիյէ Սարահանէ անպարը իշուն միւպայեա օրունաճաք օրան պալատէ մուհարրէր օրմըտար սախթիանըն էսմանը երեզլիւք պայիմէ երեզլըրա օլարաք մաքպուզ սէնէալինին վիրուտինտէ Պուլտուր էմվալինտէն հէվալէթէն վիրիմէք իւզըն ֆիլաթը մուրաքքամէլէր իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ թէմուզըրումինին օն իւշիւնճիւ փէնչէնպիհ կիւնիւ քալարըր գալթիսի վիրիլճէ յիւնտէն, ի թապընա թալիպ օլարաքըն եհվմը մէզըլուրտէ Տարը Ծուրայի ասքըրլիէ կէլմէլէրի:

40 Թէմուզ 1878

Պապը Սէրասքէրի

